## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

*Հարգելի խմբագրություն.*

*Վերջերս ես կարդացի «Արշակ Երկրորդ» վեպը (Երևան, 1977)։ Ինչպես հայտնի է, պատմական անցյալը և մանավանդ սեփական ժողովրդիդ պատմությունը միշտ էլ հետաքրքրություն և հմայք ունի։ Հաճույքով բացեցի գիրքը, սակայն զարմանքով փակեցի այն։ Վեպը թողնում է տարօրինակ տպավորություն։ Հեղինակ Պերճ Զեյթունցյանը, խոսելով հայ ժողովրդի պատմության IV դարի իրադարձությունների և մասնավորապես Արշակ II-ի գործունեության մասին, զարմանալի կերպով անտեսում է պատմական փաստերը։ Բայց ինչո՞ւ։ Հեղինակը, ըստ երևույթին, կարծում է, որ գրողը իրավունք ունի փոխելու պատմությունը՝ ինչպես կամենա։*

*Դիմելով «Հանդեսի» խմբագրությանը, խնդրում եմ պարզաբանել, թե ճի՞շտ է, արդյոք, երբ գրողը հակասության մեջ է մտնում պատմական իրականության հետ։*

*Այդ հարցը ինձ հետաքրքրում է նաև աշխատանքի բերումով. ես աշխատում եմ որպես Գրքասերների ընկերության Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար և կուղենայի պատասխան տալ բազմաթիվ ընթերցողների, որոնք հաճախ ինձ դիմում են այդ գրքի կապակցությամբ։*

Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

*Խմբագրության կողմից.—Ընդառաջելով ընթերցողների ցանկությանը, «Հանդեսի» խմբագրությունը և Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը մտադիր են նամակում բարձրացված հարցի վերաբերյալ կազմակերպել քննարկում պատմաբանների, գրականագետների, գրողների և ընթերցողների մասնակցությամբ։*